

Մաղթանքը գոր կ'ուզենք յայտնել այս ուրախ առիթով՝ այն է որ տեսնենք Մխիթարեան վաստակաւոր Միաբանութեան գոյգ միւղերը միշտ աւելի եւս միացած, մինչեւ դառնան գերդ միակ գործօն ընտանիք մը:

Մենք ալ կը բաղձանք՝ ներկայ պատգամով՝ կերպով մը մասնակցիլ երեքհարիւրամեակի հանդիսաւոր տօնակատարութիւններուն, պատուելու համար՝ Եկեղեցւոյ այս պահուն՝ Աստուծոյ երեւելի Մարդը, գիտակից՝ ինչպէս ենք՝ թէ իր ուսուցումը աւելի քան երբեք այժմէական պիտի արձագանգէ բոլոր Եկեղեցիներուն եւ ունկնդիր աշխարհին:

Մաղթելով, ուրեմն, որ տօնակատարութեան այս պատեհութիւնը արթնցնէ եւ աւելի եւս ընդհանրօրէն ծաւալէ աւետարանական յորդորը՝ Քրիստոսի հօտին միութեան, սրտագին կը բաշխենք Մեր Առաքելական Օրհնութիւնը՝ Յովհաննէս Վիպրանտս Ծիրանաւորին, Ն. Ամնպտ. Կէտիկեան Պատրիարքին, Ընդհանրական Արքանքուն եւ Մխիթարեան գոյգ պատկառելի Հաստատութեանց անդամներուն, եւ բոլոր անոնց՝ որ պիտի մասնակցին գեկուցուած հանդէսներուն:

Կանուովոյ Դղեակէն, 8 Սեպտեմբեր 1977

ՊՕՂՈՍ Զ. ՊԱՊ

ՅՈՐԵԼԵԱՆԻ ԽՈՀԵՐ

ՄԽԻԹԱՐԻ ԼՈՅՍԸ

ԾՆՆԴԵԱՆ ԵՐԵՔՀԱՐԻԻՐԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

(1676 - 1976)

«Զայն հնչեաց աստուածեան. Հա՛պա լոյս եղիցի. եւ եղիւ լոյս արեւի՝ Մխիթար Սարգիսի»:

(Հ. ԵՂԻԱ ԹՈՎՄԱՃԱՆ, Տարն. Բ. էջ 172)

ԵՐԿՆԵՐ ԵՐԿԻՆ ԵՒ ԵՐԿԻՐ

Երկունքն էր բունք մեր Արարատեան երկիրն համօրէն. բոսորաւոյն շամանդաղն էր պատեր հսկայ Մասիսներն ու դաշտերը մեր յուրթի. լիճերը պայծառ՝ ծիրանի շուրջառ էին հազեր. Սօսեաց անտառէն քուրմերն էին իջեր՝ քաղցրանուաղ քնարով ու պարով երգելու երկունքն Հայոց աշխարհի. երկունք լոյսի եւ իմաստութեան, երկունք հաղարազանձ մեր մշակոյթին, երկունք կեանքի, յարաճուն վերելքի ու վերածնութեան:

Դարեր դարերու էին յաջորդեր, ու շատ անգամ բոցեր երկնաշառայլ փռեկեր էին ատրաշէկ երկինքը մեր, եւ բոցերու մէջէն պատանեկիկ մը խարտեաչ սլացեր էր խիզախօրէն մեր հրավառ սարերն ի վեր, մեր ժողովուրդի յաւերժութեան, անոր մշտանորոգ ու անթառամ երիտասարդութեան երփներանգ ծիածանը փռելու անհունին մէջ, դառնալով խորհրդանիշ հայ ցեղի ու մշակոյթի անմահութեան:

Ողին էր ան Հայաստանեայց, հարազատ ծնունդ՝ վեհափառ Մասիսներուն, որ դարերու անվերջ հոլովոյթին մէջ՝ մեր հայազարմ ինքնութեան դարբնոցին տառապանքով կը քանդակուէր ամրակուռ, եւ լուսածին ստինքներէն այն ծիրանի ծովակին՝ կը ծծէր կաթն իմաստութեան, վահագնի լուսաճաճանչ եղէգնուտին բոցերէն ըմպելով խորհուրդն հանճարին յաւերժական հարսնութեան:

Բոցահեր պատանեկիկն այն արփիանման, «զեղապատշաճ եւ անձնեայ, քաջապանդուր, խայտալէն եւ հաստաբազուկ», զերդ ազա-

տուժեան առաջամարտիկ նահապետ, անհանդուրժող՝ ստրկութեան ու բռնութեան լուծին, «Հայկ» էր կոչուեր մեր աղբային ծննդամատենանի առաջին էջին վրայ, ու մեր ժողովուրդի ամէն մէկ զաւակի ճակատին էր դրոշմուեր անունն այդ օրհնեալ:

Պայծառ արշալոյսի մը զեփիւռին հետ, մեր պատմութեան հորիզոնն ի վեր, երկնասլաց թռիչքով դարձեալ բարձրացեր էր այն պատանեկիկ-հսկան, զերդ աստղ առաւօտեան, Տիգրանի փառապանծ թաղով պսակաղարդ: Հայաստանի սահմաններն էին ընդարձակուեր, հօր կայսրութեան մը արծուենիչ դրօշներով, հելլէն մշակոյթի շքեղ բազիններով:

Երանաւէտ ճաճանչներով լուսաղարդ օր մը, դարձեալ յայտնուեր էր պատանեկիկն այն հրաչեայ, Արածանիի կանանչ ափերուն, քրիստոնեայ Աւետարանի շնորհներով օծելու ճակատներն յաղթական մեր հեթանոս պապերուն. ու ձայն մը հօր փոխեր էր ընթացքն Հայոց պատմութեան, բաժներ էր մեզ յաւէտ տիրակալ Արեւելքի մոլեռանդ սաղբանքներէն: «Մկրտի ծառայս Աստուծոյ Տրդատ, Թառաւոր Հայոց». ձայնն էր շնորհատու մեր Լուսաւորիչ Գրիգորին:

Խաղաղասէր ու մեծագործ թաղաւորի մը օրով, Տարօնի դաշտերու բոյրով շողացեր էր կրկին պատանեկիկն այն հրաթեւ, ոսկեղէն տառերով քանդակելու պատգամներն յաւերժին՝ Մասիսի պտուիւր կողերուն. «Ծանաչել զիմաստութիւն»: Մեծ Հացեկացիին հոգին էր լուսափայլ, որ կ'անցնէր մեր աշխարհէն, անմահութեան ներտարով օծելու մազաղաթներն հայ մշակոյթին:

Արիւնի ու պատերազմի օր մը, օր մը սարսուղին, մարտադու շեփորներու ահարկու հնչիւններով, մեր Աւարայրի կարմիր հերոսն էր դարձեր պատանեկիկն այն լուսարփի, եւ ոսկի փողերով կոչուեր էր Վարդան: Գողթնի բամբիւռով մահերդ մը վսեմ կը հնչէր հեռուէն, բամբ ու սրտադին. «Հաւասարեսցէ մահս մեր ընդ մահու արդարոց»: Եւ ազատութեան դրօշն էր ծածաներ մեր հայրենիքի սլացիկ զմբէթներն ու խաչերն ի վեր:

Հաղար անգամ երկունքն էր բռներ մեր Արարատեան երկիրն համօրէն, եւ հաղար անգամ եկեր երեւցեր, բոցերու մէջէն կրկին էր փայլեր պատանեկիկն այն լուսաշող, ու փրկեր էր մեր հողն՝ անէծքէն, սուրէն, օտարին լուծէն, կամ տգիտութեան թանձր խաւարէն. կոչուեր էր Աշոտ, կոչուեր էր Լեւոն, կամ հեղահողի Շնորհալի Ներսէս, կոչուեր՝ Դաւիթ Բէկ, այդ անմահ ոգին Հայոց աշխարհին:

Ու դարձեալ երկունք՝ տասնեւեօթներորդ դարու սուրբ ծոցէն, Արծրունեաց տոհմի նոր հայրենիքէն. մեր աշխարհասփիւռ հայութեան վերեւ դարձեալ կը հնչէր զանգն աւետաւոր. Սօսեաց անտառին դողացեր էին ծառերը բոլոր:

Ահա հրեղէն եղէգին փողէն ծուխ է որ կ'ելլէր, դարձեալ եղէգին փողէն բոց կ'ելլէր, ու բոցին մէջէն՝ մեր հաղարամեայ սրատանեկիկն այն, այն անմահ ոգին Հայոց աշխարհին, հրաշող, լուսահեր, դարձեալ կեանք կ'առնէր. Հայերն անխտիր զինք կ'ողջունէին իբրեւ երկնաշնորհ հրեշտակ մը պայծառ...: Հայոց աշխարհին ոգին կը թնդար: Ու զինք կոչեցին՝ ԼՈՅՍ ու ՄԵԽԹԱՐ:

Սերաստիոյ Սուրբ Նշան վանքի սրբազան սեմէն, վերածնունդի զերդ նոր մարդարէ, հայեացքն իր յառած սէգ Մասիսներէն մինչեւ Վոսփորի չքնաղ ափունքներն, կը կանգնէր Մխիթար՝ Մաշտոցեան ջահով ցրուելու ամպերն հոծ տգիտութեան, քրիստոսեան խաչով ջախջախելու հին օձը դժխեմ՝ եղբայրադաւ սառ ատելութեան. կու դար Մխիթար տարածելու ծիածան մը պայծառ՝ կրօնքի եւ գիտութեան, հաւատքի եւ ազգութեան, սիրոյ եւ եղբայրութեան պաշտելի դաղափարներով երփնալառ:

Երկնէր երկին եւ երկիր...:

ԱՐԵՒԱԳԱԼ ՀԱՅՎԱԿԱՆ

Նորօրինակ է տասնեւեօթներորդ դարու մեր վերածնունդը. անիկա լոկ մէկ հերոսի մը կամ հանճարի մը ճիգերով չէ որ սկիզբ կ'առնէ ու ճիւղաւորուելով կ'ընդարձակուի, այլ խումբ մը նուիրեալ հոգիներ՝ կարծես ձեռք ձեռքի տուած, թէեւ իրարմէ անկախաբար դործելով յաճախ, բայց թերեւս իրարմէ խորխուսուած, հօր դարբնոց մը կը կազմեն աշխատանքի, ու տիտանային ճիգերով կը կերտեն, կը քանդակեն, կը շքեղադարձեն վերածնունդի մեր փառապանծ տաճարը:

Արեւազա՛լ հայկական...:

Վանական ու կրօնական վերադարձում, գրական ու գիտական վերելք, հուսկ նաեւ քաղաքական անկախութեան եւ ազատագրական դաղափարներու տենդագին հետապնդում. ահա՛ գլխաւոր տարրերը այդ վերածնունդին:

Արեւազա՛լ հայկական...:

Եւ հերոսներ հերոսներու ետեւէ, ինչպէս աւետարեւր աստղաբոյլ մը, կու դան պայծառ դէմքերով իրարու փոխանցել Լուսաւորի կանթեղն հինաւուրց, նոր աւիւն ու կեանք սփռելով՝ Սուրբ Էջմիածնէն մինչեւ Բաղէշ ու Նոր Զուղա, Սիւնեաց աշխարհի «մեծ անապատ»էն մինչեւ Վանայ ծովակին փոքրիկ կղզիները, մինչեւ արտասահմանի հեռաւոր դաղութները՝ Վենետիկէն Լիով, Ամսդերտամէն Լիվորնոյ, Պոլիսէն Մարսիլիա:

Արեւազա՛լ հայկական...:

Ոսկի տառերով թող արձանագրուին անուններն այն դիւցազններուն՝ որոնք անդրանիկ քայլերն առին մեր վերածնունդի նոր դարուն, խոնարհ Մեղապարտէն մինչեւ Խաչատուր, մինչեւ Ոսկան կամ եղբայրներն Վանանդեցի, բազմավաստակ Վժանցիէն մինչեւ Սիմէոն Զուղայեցի. արփիաշող թող քանդակուին անուններն օրհնեալ Ժէ. դարու մեր լուսամիտ Կաթողիկոսներուն՝ դերդ չքնաղ երրորդուն թիւն. Մովսէս, Փիլիպպոս եւ Յակոբ Դ. մինչ հեռուէն կը լսուին Հալիճորի մարտիկներու շփոթներն յաղթական:

Արեւադա՛ւ հայկական:

ՀԱՆՃԱՐԻՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Տասներեք երկար դարեր անցեր էին Մեսրոպ Մաշտոցի յայտնութենէն ի վեր, եւ ոսկեղէն մշակոյթը մեր նաեմացեր էր. լոյսի դարերն անցեր էին. աշունն ու ձմեռը մեր լեռներէն իջեր՝ սրտերն էին բռնեք հայութեան բոլոր. կարծէք փուլ կու դալին Հայոց գլմբէթները լուսաշող:

Անիի կործանումէն ասդին՝ վեց դարեր էին սահեր. իսկ Կիլիկիան մեր արքաները երեք հարիւր տարիէ ի վեր լուր էին յաւէտ, մոխրի ու աւերի տակ թողլով երբեմնի ծաղկեալ մեր քաղաքներն ու վանքերը, մշակոյթի մեր փառապանծ ոստանները:

Հայոց պատկառելի Կաթողիկոսներն անդամ, որ այս ընդհանուր քայքայումին մէջ՝ կը յայտնուէին որպէս լաստեր փրկութեան կամ հասարակաց Հայրեր, յաճախ տառապաղին կը կաշկանդուէին՝ բռնակալ հարստահարողներու անդուծ լուծին տակ:

Դաւանական անդադրում վէճեր՝ պառակտումի որոմը կը սերմանէին հողիններու մէջ. սրտեր սրտերէ կը բաժնէին, Հայը Հայէն կ'անջատէին. օտար հանդերձներով ու ծէսերով կը լեցուէին հայ ժամերը, հայ խոնինն ու աղօթքն անդամ անընդունելի կը նկատուէին, թերազնահատելով ինչ որ դարերու նուիրականութեամբ օծուն՝ մեր ժողովուրդին համար անկապտելի ժառանգութիւն մըն էր:

Այս տարաբախտ կացութեան մէջ, մեր ժողովուրդը՝ պանդխտութեան ցուպը ձեռքին՝ կը թափառէր երկրէ երկիր, ի խնդիր պատուութեան, վաճառքի, լոյսի ու գիտութեան:

Նահապետին սրտէն արիւն կը ժայթքէր այս համատարած քաոսին դիմաց, ու հարց կու տար տխրադին.

«Ո՞ւր ես, հայ Հանճար, անցեր ես անցեր...»

Հին եւ երկայն դարք, այլ եւ այլ բախտով,

Մեր հայ հայրենեաց վրայէն սահելով՝

Սեւ ու սըպիտակ քողերով՝ պատեր,

Զաղուորն այն ծածկեր՝ անցեր ես, անցեր...:

Պիտի դար Մխիթար՝ փարատելու այդ թանձր մշուշը, թօթափելու այդ մոխիրը, վերցնելու սուգի շղարշը մեր հայրենի դաշտերէն, վերածնունդի դանդաղ շարժումին տալու նոր դարի ու խանդ՝ տիրանային ճիղերով, որպէս մերօրեայ խիղախ մարգարէ: Պիտի դար Մխիթար յարութիւն տալու Հայ Հանճարին, եւ աշխարհին դռնէլուն՝ թէ «Հայք չեն անցեր»:

ՀՈՂԴԱՐԻ ԼՈՅՍԸ

Սուրբ Լուսաւորչի կանթեղն անմար դարձեալ աւետիս կու տար, դերդ վարսամ տարփալի Հայոց աշխարհի, Արծրունի թագին մայրաքաղաքէն, ինչպէս երբեմն չքնաղ Նարեկէն կամ Հռոմկլայէն:

1676 թուականն էր. Փետրուարի 7:

Լոյս մը ծագած էր փոքրիկ Հողդարի խոնարհ ընտանիքի մը քիւլին տակ. ուրախութեան կանչ մը քալած էր, այդ գիշեր, պատուհանէ պատուհան, աւետելու մանչ դաւակի մը ծնունդը. Մանուկ՝ որդի Պետրոսի, որ պիտի կոչուի Մխիթար Սեբաստացի:

Եւ Հողդարն այդ աննշան՝ դարձաւ այդ օրէն նոր դարերու Հայեկացը երեւելի, որու լոյսը պիտի դար ողողել մեր աշխարհը՝ Մաշտոցեան շողերով:

«Ի՞նչ պիտի ըլլայ այս մանուկը», կ'ըսէին թերեւս ծնողքն ու ազգականները, որոնք աղքատ մարդիկ էին, պարզունակ փերեղակներ: Իրենց միակ հարստութիւնը՝ քրիստոնէական հաւատքի լոյսն էր. եւ հիմա՛կ՝ այս մանչուկը, դերդաստանին միակ արու ժառանգը:

Ու մեծցաւ մանուկը, մտաւ Ս. Նշանի պատմական վանքը, ուր Ս. Անտոն անապատականի ճղնասուն օրինակով խանդավառ՝ դարձաւ կրօնաւոր, վանական, սարկաւադ: Սասունցի Դաւթի նման՝ ոչ թէ տարիով, այլ օրով ու ժամով կ'աճէր այդ շնորհալի պատանին՝ մշակոյթի ու սրբութեան սնունդներով:

Լոյսի անխոնջ ու տարփաղին փնտռողը մը եղաւ Մխիթար Սարկաւադի կեանքը. պրպտեց ձեռագիրներ, կարգաց, հաւաքեց, հայ Ս. Հայրերու գրքերէն՝ փութաջան մեղուի նման՝ Ոսկեփորիկ կաղմեց, դաւանաբանական ծաղկեփունջեր յօրինեց, Յայամաւորքներ մաղեց, Աստուածաշունչ ու Նարեկ ծծեց, քարոզներ ու ճառեր պատրաստեց, սրբադան տաղեր շարագրեց, փնտռեց մանաւանդ ուսուցիչ եւ առաջնորդ վարդապետներ:

Լոյսի սիրահար, լոյսին հետամուտ, հեռացաւ պահ մը վանքի սահմանափակ շրջանակէն, քալեց Սեբաստիայէն Էջմիածին, Խոր-Վիրապէն Սեւան, Էրզրումէն Բասեն, Հալէպ ու Կիպրոս, իմաստութեան ի խնդիր: Եւ ի՞նչ դժնդակ պայմաններու մէջ:

ՍԱՌՆԱՊԱՏ ԼԵՌԸ

Երկու հոգեւորականներ, Մխիթարի առաջին դաստիարակներ եւ անոր տան հարեւաններ, որոնք տունին մէջ կուսաստան էին կազմեր ու աղօթանուէր կեանքով երկինք կ'երթէին, գիշեր մը տեսիլք տեսան. սառնապատ հսկայ լեռ մը կար դիմացին, որու կատարին՝ լուսաւոր տաճար մը. մանուկ մը փոքրիկ, բրդէն ձեռքին, լեռն ի վեր ճամբայ կը բանար, որ մարդիկ դիւրութեամբ հասնին կատարին: Մխիթարն էր...: Ու լեռան դազաթին, լուսաշող Հայրապետներ կը պատրաստուէին բազմատեսակ գանձեր նուիրել այդ հերոս պատանիին:

Արշալոյսն էր Հայոց Վերածնունդին:

Իսկ վիճակը մեր աշխարհին...: Ո՛հ, դժբախտ կացութիւն: 1692 թուականի գարունն էր. Մխիթար կը գտնուէր Սեւանի կղզին: Յանկարծ լուր կու գար թէ անուանի արքեպիսկոպոս մը պիտի գար այցելութեան: Ու վանքն ամբողջ, հարսի նման կը պայծառազարդուէր, դարպասէն մինչեւ եկեղեցի: Մեծ դրաղարանին մէջ, սակայն, վանականները կը նշմարէին ցեցոտած ու փոշոտ դէպ մը ձեռագիրներ. ու... ծով կը թափէին:

Ի՞նչ ողբալի մտայնութիւն դեռ ժէ. դարու վախճանին՝ մեր աշխարհի սրտին վրայ:

Հակառակ՝ լուսամիտ հերոսներու դիւցազնական ճիգերուն, նորածագ արեւը չէր յաջողած տակաւին ի սպառ փարատել տգիտութեան մէջը դժխեմ:

ԿՈՅՐ ՄԱՐԳԱՐԷՆ

Մխիթար, այդ օրերուն, ծայրայեղօրէն մտահոգուած համայն մեր աշխարհի փրկութեան ու լուսաւորութեան հարցերով, ելք մը կը խորհէր կենսատու:

Զգայուն, հայրենասէր, խորապէս երկիւղած ու բարեպաշտ Մխիթար սարկաւազ, Մեսրոպ Մաշտոցի հարազատ հետքերէն քալելով, կու տար ինքնինքն ճշմութեան եւ առանձնութեան, երկինքէն հայցելու այն՝ ինչ որ մարդկային հնարքներով գրեթէ անկարելի էր: Ու ծիածան մը կը պարզուէր Մխիթարի հոգիին մէջ, յուսալիւ տենչերով առլցուն: Աստուածամայրը կ'իջնէր Սեւան, ինչպէս երբեմն Նարեկի ծովակին դիմաց, քաջալերելու իր ծառան, ու ստեղծագործներն չնոսնայով օծելու անոր սիրտն ու միտքը, հայ աշխարհի փրկութեան պատգամներով:

Ու չենք գիտեր, այդ լոյսէն շլացած, թէ գիշերային երկարատեւ ընթերցումներէն հիւժած, կամ թէ այլ դժբախտ պատահարներ

րու հետեւանքով՝ ոգեսպառ, Մխիթար յանկարծ կը կուրնար: Բժըշկական ամէն խնամք, մայրական ամէն գուրգուրանք կը մնային ասրադիւն:

Բայց Մխիթար չէր գիտեր յուսալքուիլ. հոգեշունչ տաղեր կը յօրինէր եւ այցելուներուն գրի առնել կու տար. Աստուածամօր կը դիմէր պաղատագին, գոչելով. «Լոյս տուր իմ ակին... քաղցր Աստուածածին»:

Ու լոյսը կ'իջնէր յամբօրէն...:

Մխիթար կուսակիւսն քահանայ կը ձեռնադրուէր քսան տարեկանին, Սեբաստիոյ Ս. Նշանի վանքին մէջ:

ՆՈՐ ԴԱՐՈՒ ՎԱՆԱԿԱՆԸ

Մխիթար ծնաւ ու մեծցաւ դարու մը մէջ, մեր պատմութեան այն պահուն՝ երբ երկարամեայ պայքարն էր սկսած տգիտութեան ու ատելութեան խաւարին դէմ, բայց կը բախէր տակաւին բիւրաւոր ու բազմատեսակ արգելքներու:

Դժբախտաբար, փրկութեան ու լուսաւորութեան ի նպաստ կատարուած բազում ձեռնարկներ, մեծ մասով ամլութեան կամ շուտով մեռնելու դատապարտուած էին՝ մայր երկրին մէջ, նախ՝ զարգացման միջոցներու պակասէն, եւ երկրորդ՝ քաղաքական դժբախտ պայմաններէն:

Շատ դժուար էր փութով մեր արեւելեան աշխարհին մէջ փոխադրել Արեւմուտքի յառաջադէմ միջոցներն ու լուսաւորութեան նըպաստող բազմատեսակ գիւտերը, ինչպէս՝ տպագրական արուեստը, իր յարակից յարմարութիւններով, որոնք այնքան պիտի սատարէին լուսաւորութեան գործին:

Միւս կողմէ՝ պատերազմներ, անխնայ տուրքեր ու ջարդեր կու դային խանգարել ու կասեցնել ամէն լաւատես ձեռնարկ ու ազգանուէր աշխատանք, տեւականօրէն արիւնադրկելով մեր ժողովուրդը: Շրջապատուած առհասարակ ոչ-քրիստոնեայ տարրերէ, կը պակսէր մեր ժողովուրդին՝ խաղաղ ու լայնախոհ շրջանակ, ինչ որ անհրաժեշտ պայման է յառաջադիմութեան, մանաւանդ մշակոյթի ասպարէզին մէջ:

Մայր երկրին մէջ սկիզբ առնող լաւ ձեռնարկներ ընդհանրապէս ձախողանքի են մատնուած նաեւ յաջորդութեան պակասէն: Ասիկա ալ անյաջողութեան յարկաւ պատճառը, որու լիովին գիտակցեցաւ Մխիթար, եւ խորհեցաւ զօրեղ լուծում մը:

Հարկ էր Միաբանութիւն մը հիմնել:

Եթէ պատմական տխուր իրադարձութիւններու հետեւանքով՝ նախախնամական եղաւ Մխիթարի Արեւմուտք հաստատուիլը, վե-

րոյիշեալ երկու տեսակէտներէն, գտնելով նախ Մեթոնի ապա Վե-
նետիկի մէջ՝ լուսաւորութեան զօրեղ ազդակներ, խաղաղ ու քրիս-
տոնեայ միջավայր, այսինքն՝ պարարտ հող վանական կեանքի զար-
գացման և մշակութային վերելքի, այդպէս չէր՝ երրորդ տեսակէտէն:
Յաջորդութեան հարցը առանձին կազմակերպութեան կը կարօտէր:

Մխիթար եթէ միայնակ Եւրոպա անցնէր, թերեւս Ոսկան Վար-
դապետի նման արդիւնաշատ հրատարակիչ մ'ըլլար, կամ ինչատուր
էրդրումցիի նման գիտնական մը, հեղինակ բազմաթիւ մատենանե-
րու: Վերածնունդի աստղերէն մէկը:

Մխիթարի մեծութիւնը, ուրեմն, հոն է որ գիտցաւ ինքզինք
բազմապատկել, ծնունդ տալ իր գործը շարունակող հոյ մը նուիր-
եալներու, դարերով յարաձգելու համար գործը՝ զոր կը սկսէր:
Մխիթար լիովին համոզումն ունէր թէ միս մինակ կարող չէր ի գը-
լուխ հանել ծրագիրն այն մեծղի՝ որ ծնունդ կ'առնէր իր գանկին
մէջ հեռատես:

Ո՛վ կրնայ թափանցել այդ օրհնեալ գլուխին մէջ, տեսնելու
անոր խորհուրդներն անճառ: Թերեւս 300 տարի հարկաւոր եղաւ
ճանչնալու եւ ըմբռնելու համար անոր ստեղծագործ յղացումները:
Ու մենք այսօր բախտաւոր ենք՝ Մխիթարի գործին շարունակութեան
արդիւնքէն, այսինքն՝ իր հիմնած Միաբանութեան 260ամեայ վաս-
տակին շողարձակումէն եւ լուսաւոր հետքերէն ետ դառնալով մին-
չեւ ԺԸ. դարու սկիզբները, ամբողջապէս գնահատելու Մխիթարի,
թոյլ տրուի որ ըսեմ՝ Մեծն Մխիթարի կեանքն ու գործը, ու մա-
նաւանդ անոր յղացած մեծղի ծրագիրը:

Այո՛, հարկ էր Միաբանութիւն մը հիմնել. որով Մխիթար օր
մը պիտի դառնար Չամչեան, պիտի դառնար Աւգերեան, Բագրատու-
նի, պիտի դառնար մանաւանդ՝ Ալիշան: Եւ այս բոլորը՝ Մխիթարի
լոյսին ճաճանչներէն պիտի առնէին կեանք եւ աւելն:

Ահա՛, հոս է առաջին ու մեծ նորութիւնը՝ զոր բերաւ Մխիթար
Սեբաստացի, հայ վանականութեան պատմութեան մէջ, 25 տարե-
կանին: Վերանորոգ վանականութիւն մը, սերտօրէն կապուած մէկ
կեդրոնական Մենաստանի մը ու վանահօր մը, կրօնաւորական ուխ-
տերով նուիրականացած, միասնաբար հետապնդելու համար միակ
ծրագիր մը՝ իր զանազան ճիւղաւորումներով, որոնք պիտի ճառա-
գայթէին կրօնքի եւ միանձնութեան, մշակոյթի եւ գիտութեան աս-
պարէզներուն մէջ:

Ու խորհեցէք որ Մխիթար տակաւին խորապէս տեղեակ չէր Ա-
րեւմուտքի նմանօրինակ հաստատութիւններու կազմակերպութեան.
որոնց մէջ իսկ ապագային պիտի փայլէր իր իւրայատուկ կենսունա-
կութեամբ ու ծրագրով:

Այսպէս Մխիթար կը դառնար նոր դարու հայ վանականը:

ՏԱՐԱԳԻՐ ԱՌԱՔԵԱԼԸ

Նման տենչեր, նման մտահոգութիւններ, նման ձգտումներ կը
փոթորկին տիտաններու սրտին մէջ: Մեսրոպ Մաշտոցի նման, Մխի-
թար Վարդապետ եւս, վանական խստակրօն կեանքէ մը ետք, ձեռք
կ'առնէր քարոզութեան դաւադանը, շրջելու համար դաւառէ դաւառ,
հոգիներու լուսաւորութեան որպէս ջահ սրբամաքուր: Կը քարոզէր
Սեբաստիա, Թոքաթ, Մարզոտան, Ամասիա, Սամսոն, Տրապիզոն,
Բասեն, Էրզրում, հուսկ՝ Պոլիս:

Բայց նորօրինակ էր վարքն այս երիտասարդ աւետարանիչին,
հօր էր եւ ազդու՝ անոր խօսքը: Մխիթար կը քարոզէր ճրի, չէր սի-
րեր դրամ հաւաքել, չէր պաշտեր արծաթը, կ'ապրէր շատ աղքատ-
օրէն՝ Յիսուսանման պայմաններով: Աստուծով օծուն էր անոր խօս-
քը. եւ ամէն մէկ քարոզին՝ բեմէն կեանք կ'առնէին Լուսաւորչէն
մինչեւ Շնորհալին, մեր Եկեղեցւոյ ոսկերութիւն եւ շնորհախօս Հայ-
րապետները բոլոր: Ժողովուրդը ծարաւի՝ դիւթուած էր Սեբաստա-
ցի վարդապետին շրթներէն:

Հմայուած անոր աստուածաբանալ խօսքերէն եւ սրբակենցաղ
վարքէն՝ շուրջ կը հաւաքուէին խանդավառ երիտասարդներ, որոնց
սրտին մէջ իսկոյն կը ծլէին սերմերն աւետարանական: Կը կազմուէր
խմբակ մը ընտրեալներու, որոնց հետ, 1700ի ընթացքին, Մխիթար
հիմը կը դնէր իր Միաբանութեան, Պոլսոյ մէջ:

Եղբայրութեան, սիրոյ եւ համերաշխութեան, մանաւանդ՝ կրօ-
նական միութեան դրօշն էր որ կը ծածանէր այդ անձանթ ու փոքրիկ
վանատան վրայ, որ պիտի ըլլար որրանը ապագայ Մխիթարեան
Միաբանութեան:

Բայց Վոսիփորի ափերուն տարածուած այդ չքեղ մայրաքաղաքը
փակեց իր դռները սիրոյ կանչին, մանաւանդ թէ վտարեց իր ափե-
րէն եղբայրութեան այդ առաքեալը, որ ստիպողաբար փնտռեց օ-
տար հորիզոններ:

Ու Մխիթար, տարաբախտ պայմաններու տակ, կը փոխադրէր
իր Միաբանութիւնը Պոլսէն Յունաստան, Մեթոն բերդաքաղաքն ըն-
տրելով իրեն կեդրոնատեղի, Վենետիկի Հասարակապետութեան գաղ-
թավայրին մէջ:

Ծանր էր հեռանալ հայրենիքէն, մեր Երկրի սրբազան խաչքար-
ներէն ու խնկարոյր մեր տաճարներէն: Ծանր էր Մխիթարի պէս հայ-
րենասէր սրտի մը համար՝ թողուլ այդ բոլորը, թողուլ վանք ու
ձեռագիր, մանաւանդ թողուլ ժողովուրդը ծարաւի, ու դառնալ գաղ-
թական:

Ծանր էր մանաւանդ երկրորդ գաղթը, այս անգամ դէպի Վե-
նետիկ, Օսմանեան սմբակներէն հալածական, 1715ի գարնան, իր ե-

տեւ թողլով ուժգնորոշում ու կիսակործան վանք մը՝ իր չէն անկողնիցիով ու գրադարանով:

Բայց Նախախնամութիւնն էր որ կ'ուղղէր բախտը մեր աշխարհին, առաջնորդելով Մխիթարի քայլերը դէպի խաղաղ ու դարգացեալ ակունքներն Արեւմուտքի: Հոս, լաւագոյն պայմաններու մէջ պիտի ծլարձակուէր Մխիթարի գործը. հաստատ հիմերու վրայ պիտի կառուցուէր Միաբանութիւնը:

ՇԻՆԱՐԱՐ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԸ

Մխիթար, հարազատ ժառանգորդ Ներսէսներու գործնական մշտնջեն եւ ոգիին, Ադրիականի գեղածիծաղ ակերտուն վրայ շինեց նոր մենաստան, դպրեւանք ու եկեղեցի, գրադարան ու ձեռագրատուն, կառուցանելով նոր մայրաքաղաք ու համալսարան հայկական: Յատկապէս ձեռնհասօրէն կազմակերպեց նոր սերունդի դաստիարակութիւնը:

Այս բոլորը, սակայն, Մխիթար կ'իրագործէր այն ժամանակ՝ երբ հայ ժողովուրդը չունէր պետականութիւն, չկար մշակութային հայ փայլուն կազմակերպութիւն կամ այլ կաճառներ դիտական, մինչ Հայրենիքը կը հիւծէր, ինչպէս ըսինք, հարստահարող տէրերու մշտնապահութիւն, որոնք կը կրծէին մեր ինքնութիւնը: Իսկ հայ զանգուածին մէկ մասը արդէն գաղթական Լեհաստանէն Թրանսիլվանիա, իր ինքնութիւնը կորսնցնելու սպառնալիքին էր ենթակայ:

Ու Մխիթար պիտի դառնար փրկութեան լաստը եւ լոյսը բոլորին: Հողդարի փոքրիկ լոյսն էր որ կ'աճէր, կը մեծնար, ինչպէս Հացեկացի Մեսրոպի լոյսը: Կը մեծնար այդ լոյսը ու կը դառնար «Աստուածաշունչ», կը դառնար «Քերականութիւն Գրաբար Եզգուի», կը դառնար «Հայկագեան Բառգիրք». կը դառնար՝ մէկ խօսքով՝ Սուրբ Ղազար Հայոց:

Մեսրոպի գրչէն կայծեր առնելով աստղածորան՝ Մխիթար քանդակեց մեր լեզուն ոսկեդրուագ բառերով. աղճատուն ու լատինացած գրաբարին ընթացքը չեղեց դէպի հարազատ ակերն Մաշտոցեան: Մայրենի լեզուն պաշտամունքով արբէժով օտարալեզու Հայերուն համար ալ դրեց աշխարհաբարի քերականութիւն, ցոյց տալով մեծ հայրենասիրութեան հետ՝ այժմէական ոգի մը, որ այսօր ալ չի դադրիր ներշնչումի աղբիւր դառնալէ, յատկապէս արտասահմանի մեր հայութեան համար, հրահրելով ամէնքը որ սերտօրէն պաշտեն մեր փառապանծ «Մեծաքանչ»ը, եւ նոր սերունդին ալ փոխանցեն այդ խանդակաթ տենչը՝ սիրելու եւ անսայթաք խօսելու մեր լեզուն:

Մխիթար «Երդ-երգոց»ի հոգեշնորհ բուրաստանէն ծաղիկներ քաղելով երփներանգ՝ քնարերգեց սիրոյ տաղեր առ Երանուհի Կոյսն

Մարիամ: Շնորհալիի մեղրածորան երգերուն ալիքներով սրարբած՝ յօրինեց սիրուն շարականներ, որոնք ցարդ Ս. Ղազարի տաճարին կամարներուն ներքեւ կ'արձագանգեն՝ որոշ տօներու առիթով:

Ու տակաւին գրեց անխոնջ, մեկնաբանեց Սուրբ Գիրքը, ատուածաբանեց, դասախօսեց, նոյնիսկ «Մաթեմաթիքայ»ի եւ Երաժշտութեան դասագիրք յօրինեց:

ԱՆԽՈՆՁ ՀՐԱՏԱՐԱԿԻԶԸ

Բայց Մխիթար հրատարակեց մանաւանդ, հետեւելով Ոսկան Վարդապետի լուսաշող օրինակին. ու դարձաւ մեր մեծագոյն հրատարակիչը:

Մինչեւ 1700 թուականը հայ տպագրութիւններու ոսկեմատեանը սոսկ 180 գիրք կը հաշուէր. այդ է եղած երկու դարերու արտագրանքը: Մխիթար մինակը 55 հատոր հրատարակեց, որոնցմէ 14ը ինքնագիր. համագումար՝ 19-301 էջ:

1700 թուականին՝ հաղիւ քանի մը գիրք տպուած է, ամբողջ հայ իրականութեան մէջ. անոնցմէ չորսը Մխիթարի Պոլսոյ հրատարակութիւններն են. երկուքը մեծ Հրատարակիչին:

Մինչեւ հեռաւոր Ամսդերտամէն տառատեսակներ բերել տուաւ Վենետիկ, դեղաղարդելու համար իր հատորները, որոնք մէկ մէկ գոհարներ են փսկապէս, գեղեցիկ գլխաղարդերով ու այլ զարդանք-կարներով ճոխացած:

Եւ ի՞նչ կազմակերպութիւն, յաղթահարելու համար իր կղզիին ստեղծած դժուարութիւններն անգամ՝ տպագրական փորձերու սրբազրութեանց աշխատանքները անթերի ու յարատեւօրէն ի գլուխ հանելու համար, մինչ տպագրութիւնները կը կատարուէին Վենետիկի իտալական տպարաններու մէջ:

Մխիթար յաջողած էր ձեռնարկել խմբական պտղաւէտ աշխատանքի: Աստուածաշունչի տպագրութեան պատմութիւնը, կամ Հայկական Բառագրքի յօրինումը, արդարեւ, ժրջան աշխատակիցներու դիւցազնագութիւն մըն է, Մխիթարի կազմակերպիչ ոգիին սքանչելի պտուղներով ծանրաբեռն: Մովի խիղախ ալիքներն անգամ կամ ձմեռուան ցուրտը կը կասեցնէին մերթ իր շողալիւղ աշխատանքները եւ ճիգերը. բայց Մխիթար՝ իր երկաթեայ կամքով՝ յամառօրէն կը մաքառէր, յաղթահարելու եւ սանձելու համար նման դժուարութիւններ:

Ի՞նչ պաշտամունք ժամանակի թանկագին արժէքին, եւ ինչպիսի՞ ծրագրում աշխատանքի զանազան փուլերուն: Մխիթարի նամակները յաճախ լեցուն են իր ծրագրիներու մասին կտրուկ հաղորդումներով. ստէպ առիթ կ'ունենայ մանրամասնօրէն բացատրելու իր աշակերտ-

ներուն՝ թէ ի՞նչ գրաւոր աշխատանք պիտի կատարէ այդ շրջաններուն, ո՛րքան պիտի կարենայ իրագործել իր ծրագիրները, ո՛րքան պիտի տեւէ այսինչ կամ այնինչ գրքին յօրինումը, քանի՛ չարաթ, քանի՛ ամիս, եւ յաջորդաբար՝ ի՞նչքան ժամանակ պիտի գրաւէ անոր տպագրութիւնը:

Ու երեւակայեցէք որ միաժամանակ Մխիթար աստուածաբանութիւն կը դասաւանդէր, շէնքերու շինութեան կը վերահսկէր, նոյնիսկ դանազան նոր յարկարաժիններու յատակագրիծեր կը յօրինէր, ամբաստանուած իր միաբաններուն ջատագովականը կը պատրաստէր, առաքելութեան նուիրուած իր միանձներուն ուղղութիւն կու տար՝ հազարաւոր նամակներով: Եւ յաճախ հիւանդութիւն ու ֆիզիքական այլ տկարութիւններ կու դային խախտել Մխիթարի ծրագիրները: Բայց ինք կը մնար անյողգող՝ անոնց իրագործման մէջ, անտեղիտալի ու յաղթական Ոգիսեւի մը նման:

Ահա՛ դադանիքը իր մեծագործութեան, զոր իբր նուիրական աւանդ կը յանձնէր իր յաջորդներուն:

ՆՈՐ ԱԿԱԳԵՄԻԱ

Մեթոնի պատերազմին սպառնացող կրակներուն մէջէն՝ Մխիթար ի՞նչ դուրդուրանքով կը դատէր հազիւ յիսունի հասնող իր ձեռագիրները ու դանոնք անվտանգ կը հասցնէր Վենետիկ, ի՞նչ խանդավառութեամբ կը խրախուսէր իր աշակերտները՝ Արեւելքէն ձեռագիրներ հաւաքելու, պատրաստելու համար Աստուածաշունչին տպագրութիւնը եւ յատկապէս՝ մեծ բառարանին յօրինումը:

Այսպէս, բազմաթիւ ձեռագիրներ ու մագաղաթներ անքոյթ նաւահանգիստ կը փնտռէին Ս. Ղազարի ափերուն, մեր անտէրունչ երկրին թալանի ու կողոպտի այդ տխուր շրջանին: Ու կու դային հետզհետէ Սկեւռայ վանքի կամ Դրաղարկի ոսկենկար աննման դոհարները, Գլաձորի շողշողուն մատեանները, Ադրիանուպոլսոյ եւ Տրապիզոնի փառաշուք հսկաները, Վարազայ վանքի չնաչխարհիկ դլուխ-գործոց Աւետարանը, սրբազան մասունքներու նման՝ դառնալու պաշտամունքի առարկայ եւ աղբիւր անսպառ ուսումնասիրութիւններու, իրենց լոյսով ողողելու համար Արեւելքն ու Արեւմուտքը:

Ազդ մը ամբողջ իր պատմութեամբ ու մշակոյթով ծովեր կ'անցնէր, կը փոխադրուէր Վենետիկ, բոլոր մը վանականներու դիւցազնական ճիւղերով ու հնարամտութիւններով, եւ անդորր ու քրիստոնեայ հողամասի մը վրայ՝ կը կերտուէր Վերածնունդի նոր Ակադեմիա, որուն պատկառանքով պիտի մօտենար ահեղագոր ինքնակալը Նափոլէոն, Վենետիկի վանքերու բռնադրաման օրերուն, ու Լորտ

Պայրըն՝ անդլիացի մեծ բանաստեղծը պիտի ներշնչուէր այդ սքանչելի գործերէն, ու մանաւանդ անոնց պահապան կանգնող՝ Մխիթարի հայրենասէր աշակերտներէն, հայրենիքի դեսպաններէն:

Քսանեսէինդ տարի հայրենի հողին վրայ գործեց Մխիթար, յիսնամեակ մըն ալ՝ պանդխտութեան մէջ, ուր յաջողեցաւ ստեղծել նոր Հայրենիք մը, փոքրիկ Հայաստանը, ինչպէս սովոր են կոչել Ս. Ղազար ուխտի եկող բազմահազար այցելուները:

Լոյսն էր այն Հողդարի, Հացեկացի Վարադաբետին ճաճանչներով շողշողուն, որ կը դառնար փառապսակ հայ ժողովուրդին, հայ Հանճարին, հայ Մշակոյթին, հայ Եկեղեցիին:

ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱՍԵՐԸ

Հայկականութեան շեշտուած նկարագիրը Մխիթարի լոյսին էութիւնն է, անոր խորունկ յատկանիշը:

Միաբանութիւն մը կազմելու յղացումը՝ Մխիթարի մէջ ծնունդ կ'առնէր հայ ժողովուրդի հողեւոր լուսաւորութեան բուռն տենչէն: Մտահոգուած մեր աշխարհի ապագայով, ամբողջովին այդ սուրբ դործին նուիրուելու բաղձանքէն բռնկած, հետեւորդներ հաւաքել սկսաւ. եւ իր կեանքն համակ, ինչպէս նաեւ իր Միաբանութիւնը ձօնեց ամբողջապէս հայ ժողովուրդի եւ հայ Եկեղեցւոյ ծառայութեան:

1251 էջնոց Հայկազեան Բառգիրքը՝ Մխիթարի ամբողջ կեանքն էր արժած. ու մահուան անկողինէն, ալեղարդ վաստակաւորը՝ իր քարտուղարին կը թելադրէր հետեւեալ տողերը, որոնք պիտի եզրափակէին դործին յառաջաբանը, որպէս լոյս-կտակ Մեծ Հայրենասէրին.

«Խոնարհ սրտով՝ Քեզի կը նուիրեմ, ո՛վ Հայ ժողովուրդ, իմ բաղամեայ աշխատանքիս պտուղը, իբրեւ սիրոյ ձօն: Սրտագին կը տենչամ իմ վաստակ քեզի պարգեւել, եւ բոլոր անոնց՝ որ քու պայմաններուդ մէջ կը գտնուին. որովհետեւ ինչ որ իմս է՝ անիկա քեզի կը պատկանի, եւ ինչ որ քուկդ է՝ անիկա իմինս ալ է: Անոր համար՝ ինծի պարծանք է քեզի ծառայել, մանաւանդ թէ ասիկա լրումն է իմ եւ իմիներուս պաշտօնին. որովհետեւ սկիզբէն ի վեր, ինչպէս ես, այս Միաբանութիւնն ալ սահմանուած է Հայ ժողովուրդի մշակութային ծառայութեան եւ Աստուծոյ փառքին (Բառգիրք Հայկազեան լեզուի, Վենետիկ 1749, էջ 19):

Ծառայել հայ ժողովուրդին, անձնուիրաբար, սիրայօժար, ճրի, յարատեւօրէն. ա՛յս պիտի ըլլար ուղեգիրը Մխիթարի հետեւորդներուն. ծառայել Ազգին մշակութային վերելքին, վերակենդանացնել անոր պատմութիւնը, պահպանել անոր ծէսը, սրբակերտել անոր լե-

զուն, նուիրականացնել անոր խաչն ու խուռնը, դաստիարակել հայազարմ սերունդները՝ կրօնաշուկա եւ ազգասէր հոգիով, գիտութեան լոյսով: Հայրենասիրութիւնը կամ ազգասիրութիւնը, այսպէս ըմբռնուած, քրիստոնէական գերազանց ու գործօն առաքինութիւն մը կը դառնար, որ առինքնող դրօշակի մը նման՝ դարերով պիտի ծածանէր Հայոց կղզեակին վերեւ:

Մխիթար, պարտադրաբար օտար հողի վրայ փոխադրուած պահուն, նախանձախնդիր մնաց իր եւ իր Հաստատութեան հայկական նկարագրին: Չուզեց որ իր Միաբանութեան սեմէն ներս մտնեն օտարներ. չուզեց որ իր հետեւորդները լատինական, եւ առաջին իսկ բոլորէին՝ հայկական ծէսին ու եկեղեցական բնիկ կարգուսարքին գոյութիւնը ապահովելու իր Տունէն ներս, Արեւմուտքի գերագոյն իշխանութիւններէն երաշխաւորութիւն ստանալով:

Երբ առիթը ներկայացաւ որ Մխիթար ընտրէր իր Միաբանութեան համար օրինագիրը մը, այո՛ ան չընտրեց Արեւելքի մէջ գործածուած եւ ընդհանրացած կանոնները Սուրբ Բարսեղի. բայց ինչո՞ւ. որովհետեւ՝ հայ Բարսեղեան կրօնաւորները, իրենց մտայնութիւններով ու ծէսով, Արեւմուտքի ազդեցութեան ենթարկուած էին լիովին ու գրեթէ բոլորովին լատինացած: Լուսամիտ ընտրութեամբ մը՝ Մխիթար նախապատուութիւն տուաւ Արեւմտեան օրինագրի մը, անոր՝ որ լիով կը համապատասխանէր հայկական միանձնութեան նկարագրին: Մէկ կողմէն՝ ժամերգութիւն, աստուածային պաշտօններգութիւն, ներանձնական կեանք. միւս կողմէն՝ աշխատանք, յատկապէս մշակութային ու առաքելական աշխատանք. օրինակարգ մը՝ որ ամբողջապէս կ'արդիւնաւորէր Մխիթարի հայկական ըմբռնումները եւ ծրագիրները: Այդ ձեւով չէ՞ որ միթէ ի գործ էր դրուած կրօնաւորութիւնը, մեր աշխարհի հնամենի վանքերուն մէջ, իրենց ծաղկեալ շրջաններուն, Տաթեւէն Հաղբատ, Գլաձորէն Դրազարկ կամ Քեսունի Կարմիր Վանք: Մխիթարի ընտրած արեւմրտեան օրինակարգը բացարձակապէս չէր ենթարկւեր զինք լատինացման:

Ու ան քալեց ազգային գիծով, հայկական ոգիով, հայացուց Տոմարու յառաջագէտ Վենետիկն անգամ, ողողելով անոր տպարանները՝ Մեսրոպի սրբազան տառերով բիւրաւոր:

Ազգին սիրով մշտապէս մխացող հոգի մըն էր Մխիթար, որ Պօղոս Առաքելի նման, ջերմ հայրենասիրութեամբ արծարծուն, կը տենչար, եթէ հարկ ըլլար, նոյնիսկ Քրիստոսէ նզովք կրել, ի սէր իր արեւակից եղբայրներուն:

«Որքան որ կրնամ — կը գրէր Մխիթար — եւ որքան ատեն որ ողջ եմ, պիտի ջանամ աշխատիլ ի նպաստ Ազգիս հոգեւոր օգուտին ու շահին, նոյնիսկ եթէ ազգակիցներէս ոմանց անհաճոյ թուիմ եւ կամ

արհամարհանք կրեմ անոնցմէ՝ իմ դաւանանքիս համար» (Յշուկրն. Աստծոյն. ի, Վենետիկ 1733, էջ 1279):

Ու Մխիթարի կեանքը չդադրեցաւ 74 տարեկանին, 1749ի Ապրիլ 27ին: Մխիթար շարունակեց ապրիլ իր յաջորդներուն մէջ, եւ հակառակ ամէն տեսակ դժուարութիւններու՝ դարերով գործեց, գրեց, քարոզեց, ի սէր միշտ իր պաշտելի Ազգին եւ անոր հոգեւոր լուսաւորութեան:

Այս է Մեծ Հայրենասէրին խորհուրդը խորին:

ՌԱՀՎԻՐԱՅ «ԵՔՈՒՄԵՆԻՔ» ՀՈԳԻԻ

Մխիթար, հայրենիքէն հալածական, Արեւմուտք գալով՝ իրեն համար գործունէութեան նոր կեդրոն մը փնտելու անհրաժեշտութեան մէջ, դարուն ըմբռնումներուն համաձայն, անխուսափելիօրէն պէտք է ենթարկուէր, վարչական գետնի վրայ, իր հիւրընկալ երկրի եկեղեցական Պետին. գործելու համար՝ անհրաժեշտ էր անոր հաւանութիւնը եւ վաւերացումը: Ու Մխիթար դիմեց ուղղակի Հռոմի Քահանայապետին, եւ յաջողեցաւ:

Մխիթարի այս կեցուածքը, սակայն, դիւանագիտութիւն չէր, որ յաջողութեամբ պիտի պսակէր իր ծրագիրները, ինչպէս կարծած են ոմանք: Ան ունէր իր խորունկ արմատները, որոնք Մխիթարի հոգիին մէջ ծլարձակուած էին իր մանկութեան երջանիկ օրերէն: Հայ Եկեղեցւոյ հարազատ դաւանանքի մասին ան աննախապաշար տեսակէտներ ունէր: Կը վկայէ այն Ոսկեփորիկը, որ Մխիթարի գրքէն ելած՝ ծաղկաքաղ մըն է հայ եկեղեցական մեծագոյն հեղինակներու գործերէն հանուած: Պատանի Մխիթար մեր հին Ճառընտիրներու ընթերցումներէն է որ կաթիլ առ կաթիլ կազմած է իր հաւատքի դաւանանքը. մանաւանդ կրօնական վէճերու առիթով՝ ան հետզհետէ աւելի խորացուցած է իր ծանօթութիւնները, եւ տարի-հետզհետէ աւելի խորացուցած է իր ծանօթութիւնները, եւ տարի-հետզհետէ զփման մէջ մտնելով գիտնական Վարդապետներու ներս ընթացքին՝ չփման մէջ մտնելով գիտնական Վարդապետներու հետ՝ համոզուած է թէ հայ Եկեղեցին սկիզբէն «աւետարանական» կեցուածք է ունեցած, նկատմամբ Եկեղեցիներու հաղորդակցութեան եւ միութեան հարցին, ինչպէս արտայայտուած է Մատթէոսի Աւետարանի իր ընդարձակ Մեկնութեան մէջ: Ուստի, իրեն համար դաւանագիտութեան հարց երբեք գոյութիւն չունէր՝ Արեւմուտքի հետ կրօնական հոգեւոր հաղորդակցութիւն մշակելու համար:

Ու Մխիթար սերտօրէն կապուած մնաց իր ազգային եկեղեցական սրբազան աւանդութիւններուն, չուզելով երբեք խզել կապը հայրենի Կաթողիկոսներէն ալ, որոնց անունները դրօշմեց անվարան իր հրատարակութիւններու ճակատին:

«Նախանձախնդիր էր վանական կանոններու անթերի պահպանութեան, գիտակից՝ թէ բաւական չէ խոհեմաբար պիտանի օրէնքներ դնել, եթէ անբաւական է պահպանել տալ զանոնք. ուստի՝ խօսքով եւ անձին օրինակով ամէնքը կ'առաջնորդէր կանոնապահութեան: Իր հոգածութիւնն անհատնում էր եւ անսպառ, եւ կ'աշխատէր անձնութեամբ ո՛չ միայն իր փոքրիկ հօտին վրայ, այլ նաեւ համայն Ազգին համար, ինքնաթիւնը նուիրելով ինքզինքն անոնց բարիքին եւ օգուտին: Որքան ատեն որ երկնքէն կեանք շնորհուեցաւ իրեն, անկա աւելի ուրիշներու համար ապրեցաւ, քան թէ ինք իրեն: Իր անձնական հանգիստն ու դիւրութիւնը կը փոխարինէր անոնց երջանկութեան հետ, ջանալով անոնց մէջ ծաղկեցնել եւ աճեցնել ամէն տեսակ բարօրութիւն. եւ այսքանը արդէն իրեն վարձք կը նկատէր, ինչպէս կը վայելէ քաջ եւ հաւատարիմ հովիւին եւ առաջնորդին:

«Խոհական խոհեմութեան հաւասար, որ գիտէ տնօրինել ու կարգաւորել մարդկային գործերը, արիութեան առաքինութիւնն ալ իր մօտ կը փայլէր: Իր հոգիին մեծութիւնը, սրտին ընդարձակութիւնը եւ մտքին վսեմութիւնը, իր հանապազօրեայ գործերուն արիական պտուղներով ծանրաբեռն, արփախման կը փայլէին:

«Արթուն էր եւ անաչառ՝ իր անձին հանդէպ, զսպելու համար իր զգայական կիրքերը, յատկապէս ցասնականը՝ որու հակամէտ էր թերեւս ի բնէ. արդարեւ, ո՛չ մէկ անակնկալ դիպուած կարողացած է խռովել իր հոգեկան անդորր հաւասարակշռութիւնը եւ չափաւորութիւնը: Ուստի, կիրքերը իր մէջ ախտեր չէին, այլ մտքէն կառավարուած առաքինութիւններ:

Իր անձին հանդէպ խիստ էր եւ անխնայ, իսկ ուրիշներուն հանդէպ՝ գթալիւր ու կարեկից: Աշխատանքի մէջ՝ անդուլ եւ անխոնջ, այնքան որ ճաշէն ետք զքօսանքի յատկացուած ժամը՝ յաճախ նորընծայ պատանիներուն մօտ կ'անցընէր, զանոնք առաքինութեան եւ ուսման մէջ զարգացնելու նպատակով:

«Ծանր գործերու դիմաց՝ անընկճելի էր, դժուարութեան հանդէպ՝ հնարագիւտ, հաւասարապէս զուսպ եւ անխռով՝ յաջող կամ ձախտող իրադարձութիւններու առջեւ. ո՛չ առաջինին դիմաց՝ չափազանց ուրախ, ո՛չ ալ երկրորդին դիմաց՝ տարապայման վհատող: Վիշտերու եւ տառապանքներու մէջ՝ համբերող ու տոկուն, տխուր եղելութիւններու դիմաց՝ անխռով, տեղիք չէր տար տրտմութեան. ստիպողական գործերու մէջ անդանդադ, միշտ անչփոթ ու խաղաղ, մեծամեծ ու դժուարին գործերու ձեռնարկող, բայց կշռադատ ու խոհական, առանց տարուելու սնապարծութենէ, միշտ աշխատելով հասարակաց բարիքին ի նպաստ:

«Իմացական կարողութիւններով ալ գերազանցօրէն հարուստ եւ բեղուն էր Մխիթար Աբբահայր: Խելացի էր ու պայծառատես՝ նըր-

բազնին խորհուրդներու քննութեան մէջ, կորովամիտ՝ պատճառաբանութեան մէջ, եւ յիշողութեամբ՝ շատ զօրաւոր: Ուսումնասէր էր, ու մինչեւ իսկ ծերութեան օրերուն՝ անձանձրոյթ կը պարապէր գիտական եւ փիլիսոփայական, աստուածաբանական ու մեկնողական հարցերով:

«Իսկ անոր հոգիին երկնապարզ եւ հարստութիւնները թերեւս ա՛յն միայն կրնայ արժանաւոր կերպով ներկայացնել՝ որ անոր նման հոգի ունի: Մեծ էր, արդարեւ անոր հաւատքը՝ կենսունակ եւ լուսաւոր, որով աներեւոյթ եւ հանդերձեալ իրերն անգամ պայծառ ու յստակ կը նշմարէր. յոյսը՝ անվարան, որով ամուր կառած արարչին ամենակարող զօրութեան՝ աներկիւղ կը մնար կեանքի բոլոր եղելութիւններուն առջեւ. աստուածսիրութիւնը՝ բոցավառ ջահի նման մշտաբորբոք, որով իր փափաքներն հրավառ՝ զինք մեծամեծ գործերու կ'առաջնորդէին: Արդարեւ, լուսաւոր ջահի նման շողշողուն՝ կը լուսաւորէր զամէնքը:

«Ա՛յ ի՞նչ հարկ՝ խօսիլ անոր խոնարհութեան մասին, երբ ամէն տեսակ փառք ու պատիւ կամ համբաւ եւ մարդկային գովասանք՝ երազային ցնորքներ կը թուէին իր աչքին. ի՞նչ հարկ՝ դրուատել անոր հոգեկան աղքատութիւնը, կամ երկրաւոր հարստութեանց հանդէպ տածած արհամարհանքը. ի՞նչ հարկ՝ ներբողել անոր հերոսական անյիշատելիութիւնը, համբերատար ժուժկալութիւնը ու անձնուէր, անսպառ զոհողութիւնը. հուսկ՝ Ս. Կոյս Աստուածամօր հանդէպ ջերմեռանդ բարեպաշտութիւնը» (Պատմութիւն կեանք եւ վարուց Տեառն Մխիթարայ Սեբաստացւոյ, տպ. Վենետիկ - Ս. Ղազար 1810, էջ 284-292):

ՄԽԻԹԱՐԻ ԼՈՅՍԸ

Հոգեկան բազմատեսակ խորհուրդներու ներդաշնակ համերգ մըն է Մխիթարի լոյսը, որ Ոլիմպեան ջահի նման կը պլպլայ այսօր ալ անոր կենդանագործ դամբանին վրայ: Կը պլպլայ նաեւ բոլորիս սրտին մէջ՝ անեղծ հաւատքով, կիրակմուտքի ծիրանի յոյսերով, վառ հայրենասիրութեամբ:

Հողդարէն ծլարձակուած, Հացեկացէն ճաճանջներ ժառանգած, Արազածէն ու Խոր-Վիրապէն կենդանացած ջահ մըն է Մխիթարինը, իր բազմաչարքար զոհողութիւններու ամբիժ իւղովն արծարծուն, իր հրաշագործ հաւատքի բոցով միշտ առկայծ:

Լոյս մըն է ստեղծագործ, որ այլանդակօրէն խառնակուած լեզուի մը աւերներուն վրայ՝ կանգնեց մեր «Մեծաքանչ»ի հզօր աշտարակը, իր «Հայկազեան Բառերքի» փարոսը լուսապայծառ, եւ օ-

տարին քանդիչ ձեռքն խլելով մեր ոսկեղէն հաղարադանձ բարբառը՝
ամուր հիմերը դրաւ մեր ոսկեղէն նոր դարուն:

Լոյս մըն է հոգեանունդ եւ խնկաւէտ, որ Սեւանէն ու Նարեկէն
առնելով բուրլառներ արծաթեայ, օտարութեան մէջ հայ մենաստան
մը քանդակեց, Աղբիւրականի հեռաւոր ու գեղածիծաղ ակերուն՝ Փո-
քրիկ Հայաստան մը ստեղծեց, ոսկետառ մազաղաթներով, ու վե-
րանորոգ միանձնութեան եւ վանականութեան զանգերն հնչեցուց՝
հայրենի արծադանդներով:

Լոյս մըն է խաղաղ ու պայծառ, սիրոյ եւ եղբայրութեան նշոյլ-
ներով բորբոքուն, որ ատելութեան սառը հալեցուց մեր լեռներէն,
տգիտութեան թանձր խաւարը փարատեց մեր դաշտերէն, անյիշա-
հարութեան եւ ներողամտութեան շունչով ջերմացուց հորիզոնը,
Կրօնքի եւ Գիտութեան սուրբ ճանապարհը լուսաւորեց, եւ հոգի-
ները առաջնորդեց միութեան, ճշմարիտ ազգասիրութեան ուղիներ-
էն:

«Լոյս տուր իմ ակին», կը գոչէր Մխիթար, իր կուրութեան օ-
րերուն, երկնքէն հայցելով բժշկութիւն՝ իր խաւարած աչքերուն:

Տխուր պատկերն էր ատիկա ամբողջ Հայաստանին: Մխիթար
կարծէք կը մարմնացնէր իր մէջ մեր երկիրն համայն, իր բոլոր կա-
րօտութիւններով ու սուղերով: Կուրցած էր մեր աշխարհն ալ: Իսկ
վերածնունդի այդը կ'ուշանար:

Սեւանի մէջ, անմոռանալի գիշեր մը, գիշեր մը երկունքի, հըն-
չեց երկնառաք ձայնը. «ԵՂԻՑԻ»: Ու ծագեցաւ արշալոյսը չնաշխար-
հիկ: Ծիրանի լոյսին մէջէն՝ պատանի մը խիզախ, դիւցաղնօրէն ցատ-
կեց,՝ Հերակլեան կորովով պայքարելու ահաւոր զօրութեանց դէմ:

Գողթնի մեր գուսանները արթնցան հաղարամեայ թմբիւրէն,
դարձեալ ձեռք առին քաղցրանուագ բամբիւրներն ու երգեցին սարէ
սար:

«Նա հուր հեր ունէր, բոց ունէր մօրուս,
Եւ աչկունքն էին արեգակունք»:

Մխիթարի լոյսն էր ատիկա այս անգամ, որ կու գար աւետել
ծնունդը նոր դարուն: Կրակ էր համակ, աչքերն էին գերդ արեգակ:
Մեծն Ալիշան վենետիկէն պատասխան պիտի տար Գողթնի եր-
գիչներուն:

«Հայո՛ց աշխարհիկ, դարունդ է հասել»:

Ահա ա՛յս էր Մխիթարի լոյսը:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ



Ճակատախորան Մխիթար Արքայի հրատարակած Աստուածաշունչին
Frontispice de la Bible publiée par l'Abbé Mekhitar
(վենետիկ – Venise, 1733, cm. 16×26 հրդմ.)